

Վ. ՏԵՐՅԱՆՆ ՈՒ Վ. ԹԵՔԵՅԱՆԸ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՐԺՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Արեւմտահայ եւ արեւելահայ գրականությունը եւ մասնավորապես բանաստեղծությունը միասնական զարգացման ընթացքներում այնուհանդերձ տարբաժանված էր միջավայրով, գեղագիտական հարցադրումների, ազդեցությունների կտրվածքով: Նրանց գեղարվեստական ձգտումները երբեմն այնքան տարբեր էին, որ հազիվ թե առաջացած գրական անջրպետը հարթվեր պատմական ընթացքի մեջ, մասնավաճ 20-րդ դարի սկզբին, երբ գրական ասպարեզ իջան մեր երկու հատվածների խոշորագույն քնարերգակները Վահան Թեքեյանը եւ Վահան Տերյանը:

Վ. Տերյանի ու Վ. Թեքեյանի ստեղծագործությունը, որքան էլ ճակատագրով կամ էլ, ինչպես նկատված է, «գրական անհանդուրժողության» պատճառով տարբաժանված լինեն, այնուամենայնիվ, նրանց միասնության միտող ուղիները զուգակցվում են: Այսօր կարելի է փաստել, որ տարիների ընթացքում հայ նոր գրականության մեջ ձեւավորված «երկու Վահանների բարդույթ» ներհակ հասկացությունը գիտական առումներով դեռ ամբողջապես հաղթահարված չէ:

Թե մեկը եւ թե մյուսը հայ գրականության բարձրագույն զագաթներից են, նրանք երկուսն էլ գրական դպրոց ստեղծելու չափ աշխատանք եւ ուժ են ներդրել բանաստեղծական արվեստում այն կահավորման տեսակետից դարձնելով ավելի գեղարվեստական, մեղեդային, ընդլայնելով լեզվաարտահայտչական հնարավորությունները, իրար մոտեցնելով ազգային եւ եվրոպական գեղագիտության նորագույն սկզբունքները:

Սփյուռքում եւ հայրենիքում վաղուց տարածված է այն տեսակետը, որ Վ. Թեքեյանը արեւելահայ ընթերցողի համար չեղավ այնքան հոգեհարազատ եւ ընդունելի, ինչպես Վ. Տերյանի պարագային էր: Ավելին, լիբանանահայ բանաստեղծ եւ խմբագիր Վահե-Վահյանի 1978 ին իր կազմած հատընտիրի «Վահան Թեքեան բանաստեղծը» խորագրով առաջաբանում տված բնութագրումով «Շուքին մէջ մնացած մարդն էր Թեքեան, երկար ատեն անտեսուած այն ժողովուրդէն, որուն մեծագոյն երախտաւորներէն մէկն էր ինք»¹: Եվ դա ճշմարտություն է:

Արդյոք ճիշտ կլինի Թեքեյանի անտեսված լինելու հանգամանքը պատճառաբանել չհասկացված լինելով, ինչպես նշել էր «Նայիրիի» խմբագիր Ս.

¹ Վահան Թեքեան, Հատընտիր, Պէյրուք, 1978, էջ 8:

Ծառուկյանը: Գուցե այստեղ ավելի մեծ է «գրական անհանդուրժողականության» դե՞րը:

Իհարկե, գրական խանդը, որ Վ. Տերյանը պետք է «տածեր» Վ. Թեքեյանի հանդեպ, ծայրահեղ եւ միակողմանի կարծիք է, եւ ոչ էլ Վ. Թեքեյանին հասկանալն ու ծանաչելը կարող էր պայմանավորվել միայն Վ. Տերյանով, բայց չի կարելի անտեսել, որ վերջինս այնքան էլ սիրալիր ու բարյացակամ չէր արեւմտահայ գրականության հանդեպ եւ ուղղաճակատ հայտարարում էր, թե հավատով լցված չէ այդ բանաստեղծության «*վաղվա օրվա*» նկատմամբ, դա անվիճելի ճշմարտություն է:

Վ. Թեքեյանն ու Վ. Տերյանը համաչափվում են ոչ միայն գեղագիտական ընդհանրություններով, այլեւ նույն սահմաններում գրական շարժման նկատմամբ իրենց տրամագծորեն հակադիր վերաբերմունքներով:

Անցյալ դարի տասական թվականները արեւմտահայ գրականության մեջ «*հեթանոսական*» գրական շարժման ալեկոծ տարիներն էին, եւ Վ. Թեքեյանն այդ հորձանքներում էր, իսկ արեւելահայ երգիչը այն դատափետողների մեջ էր:

Նորագույն շարժման նպատակը անցյալի եւ ներկայի պատմամշակութային փոխկապակցված հարաբերության գեղարվեստական քննության հայկական փորձն էր: Ներկայի մեջ մարած էին մարդու բարոյաբանական եւ հոգեւոր վերածննդի արժեքները, այդ էր պատճառը, որ արեւմտահայ գրական շարժման մասնակիցները փորձում էին կամուրջ նետել դեպի հեթանոսական պատմական անցյալը՝ վերակենդանացնելու աստվածներին ու նրանց ոգեղեն միջավայրը, եւ այդ ամենն արվում էր անցյալի «*իդեալականացման ու վերածնման անսքող միտումով*»²: Ոգեկոչելով հեթանոս դարերը նրանք գերմանական Դասական Ռոմանտիզմի բանաստեղծների նմանողությամբ գտնում էին, որ հեթանոս անցյալի կեցության փիլիսոփայության խորհուրդն ավելի կենսահույզ կողմեր ունի, քան քրիստոնեական դարաշրջանը: Խոսքը կրոնների բուն հակադրության չէր մոտենում, թեեւ, պետք է ընդգծել, նման առարկայական զայթակղություններ որոշ իմաստով եղել են շարժման եւ նրա հակառակողների պատկերացումներում:

1913 թվականի աշնանը Դանիել Վարուժանն ու Հակոբ Սիրունին հրատարակեցին «Նավասարդ» գրական-գեղարվեստական տարեգրքի Ա. հատորը, որը գերազանցապես բովանդակում էր հեթանոսական աշխարհին ու նրա նորոգ գեղագիտական ընկալումներին վերաբերող չափածո եւ արձակ գործեր, ուսումնասիրություններ, հոդվածներ, հեթանոս ոճի եւ տրամադրության նկարներ: Նշանավոր տարեգիրքը բացվում էր Դ. Վարուժանի նույնքան նշանավոր «Նավասարդյան» բանաստեղծությամբ, որի ստեղծագործական

² Լդ. Զրբաշյան, Թումանյանի պոեմները, Եր., 1964, էջ 491:

պատմությունը շատ ավելի ուշ շարադրում է Հ. Սիրունին բանաստեղծ ընկերոջը նվիրված հատորում 1940-ին³:

Ինչ վերաբերում է Վ. Թեքեյանին, ապա արեւմտահայ քնարերգակը նպատակահարմար գտավ հանդես գալ շարժման գաղափարաբանական ազգային ոգու դրոշմով: Հետեւելով Դ. Վարուժանի «*վրժաբիբ*» ազատաբաղձ երգերին՝ նա հրապարակ հանեց «Վրեժի գինին» քերթվածը՝ ազգային-քաղաքական սուր ենթախորքով, պայքարի, ուժի հեթանոս բովանդակությամբ: Իսկ մինչ այդ ոգեշունչ ընդունելության արժանացած Լ. Շանթի «Հին աստվածներ» (1912) դրաման եւ Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» (1912) բանաստեղծական ժողովածուն գնահատվեցին որպէս նոր կայծ «... *հայ չքաւոր բեմին վրայ*» եւ նոր լար «... *հայ քնարին անկենդան թելերուն մէջ*»⁴:

Ավելորդ չէ նշել, որ «հեթանոսական» բովանդակության թելադրությամբ 1914թ. ծնվեց Վ. Թեքեյանի «Հրաշալի Հարություն» քերթվածների գրքի խորագիրը, որտեղ, ճիշտ է, շոշափվում էին պատմահեթանոսական թեմաներ, սակայն պետք է ընդգծել գրքի «անկախությունը» բուն շարժումից: Կարելի է ասել, որ շարժման սուրբը միայն մեկ երկու հատկանշական արձագանքներն էին, իսկ ժողովածուն ինքնին շարունակում էր հոգու գեղագիտության քննության այն եղանակը, որ միասնական է հեղինակի ողջ ստեղծագործության ընթացքին:

«Հրաշալի Հարություն» ժողովածուն գրաքննադատության մեջ որակվեց լուրջ եւ հասուն քայլ, անգամ քմահաճ Հակոբ Օշականը, հատորը շատ բարձր գնահատելով եւ «*ամենէն իրաւ բանաստեղծ*» հորջորջելով Թեքեյանին, եզրակացրեց «*Հրաշալի Յարութիւնը*» «*Թեքեանին Թեքեան ըրաւ*»⁵:

Ժողովածուում պատմահեթանոսական երգերն ընդգրկված էին «*Հայրենի գրոյցներու վրայ*» բաժնում: Գրքի «Իբրեւ վերջաբան» բաժնում հեղինակը նշում էր, որ վերնագիրը առերեսույթ կրօնական իմաստով է ներառել. «*Հրաշալին, անշուշտ, «հորաշքով» կը նշանակէ եւ այս Յարութիւնը «յարութիւն»ն է անցեալին, ամբողջ հոգիի մը անցեալին, եւ միայն Բանաստեղծութիւնն է, որ այս հորաշքը կարելի կ'ընէ*»⁶: Իրոք, «*Յարութիւն*»-ը հեթանոսական անցյալի ոգու գեղարվեստական նոր, փոքր-ինչ «հապաղած» կոչ էր, իսկ «*հրաշալի*»-ն կարելի էր դարձնում արեւմտահայ բանաստեղծության արժեքների վերակերտման նոր բանաձեւերը:

Անցյալը վերամարմնավորելու հեթանոսականների ծգտումը, անշուշտ ուներ հակասություններ, նաեւ խոցելի էր, եւ դա պայմանավորված էր, մեր կար-

³ Տես Զակոբ Ճ. Սիրունի, Դանիել Վարուժան, Պոքրեշ, 1940:

⁴ «Նաւասարդ» / գրական-գեղարուեստական տարեկիրք, Ա. հատոր: -Կազմեցին՝ Դ. Վարուժան եւ Յ. Ճ. Սիրունի, Կ. Պոլիս, 1914, էջ 220:

⁵ Զակոբ Օշական, Սփիւրջ եւ իրաւ բանաստեղծութիւնը, Երուսաղէմ, 1945, էջ 64:

⁶ Վահան Թեքեան, Հրաշալի Յայութիւն, Կ. Պոլիս, 1914, էջ 194:

ծիքով, ավելի շատ անցյալի նկատմամբ ոչ պատմական մոտեցումներով, այն, ինչպես նկատում է էդ. Ջրբաշյանը, «մոդեռնացնելու հիմնական տենդենցով»⁷:

Մասնավորապես ժամանակի արելեալահայ քննադատությունը անխնա վերաբերմունք էր մշակել «հեթանոսական» շարժման ուժերի նկատմամբ: Այսպես, Հարություն Սուրխաթյանը «Մշակ»ում 1913 թ. տպագրած «Սեռական էքստազից դեպի լքումն ու հուսահատությունը» հոդվածում գրում էր, որ Դ. Վարուժանը երգում է միայն տարփանքը, որն իր մեջ հեթանոսական ոչինչ չունի, իսկ դրա հետ կապվող «գեղեցկության» գաղափարը առնչություն չունի դասական աշխարհի գեղեցկության հետ:

1914 թվականի ապրիլի 30-ին Վ. Տերյանը հանդես եկավ «Հայ գրականության գալիք օրը» ծրագրային հոդվածով մերժելով հեթանոսական շարժումը չնայած համընդհանուր ակնհայտ ոգեւորությանն ու «ազգային հարցադրման լիցքին»: Խնդիրն ավելի քան բարդ էր ու հակասական, եւ այսօր էլ դեռ Վ. Տերյանի հայացքները առաջ են բերում չհաղթահարված հակազդեցություն:

Անշուշտ, շարժումը քննադատողները՝ Վ. Տերյան, Հ. Սուրխաթյան, Ե. Չարենց եւ ուրիշներ, իրենց հայացքներն արտահայտելիս ընկնում էին բաղաբական մաքսիմալիզմի հորժանուտը՝ չափազանցության մեջ՝ անտեսելով գրական շարժման կենսական առողջ կողմերը:

Այնուհետեւ Վ.Տերյանը հանգամանորեն անդրադառնում է իրենից «ռեալ վտանգ» ներկայացնող «Մեհյան» խմբի գրական ընթերցումներին: Բազմիցս վիճարկվել է այն հարցը, թե արդյո՞ք Վ. Տերյանի դատողությունները հանգում են «հեթանոսական» շարժման սահմաններին, թե՞ այն վերաբերում է ողջ արեւմտահայ գրականության անհեռանկարայնության ընկալմանը:

Խոցելի համարվող Վ. Տերյանի այն միտքը, թե «... Թումանյանի մի «Փարվանա»-ն ես չեմ փոխի պոլսահայ բոլոր հանկարծակի հեթանոսացած արտադրությանց հետ»⁸, մեզ թույլ է տալիս կարծել, որ Վ. Տերյանը ժխտել է ողջ արեւմտահայ գրականությունը: Նախ եթե մտածենք, որ Վ. Տերյանի խոսքը վերաբերում է ընդհանուր շարժմանը, ապա երեւոյթը քննելիս Վ. Տերյանը հազիվ թե մեկնաբանություններ աներ միայն բանաստեղծների ստեղծագործությունների հիման վրա, վերջապես, խոսքը վերաբերում է ոչ թե առանձին բանաստեղծներին կամ արծակազիրներին, այլ ընդհանուր գրականությանը (ի՞նչ շարժմանը - Վ. Դ.): Վ. Տերյանը Հովհ. Թումանյանի «Փարվանա»-ի մեջ պարզապես, տեսնում է ավելի շատ գեղարվեստականություն, հոգի, միտք եւ անհուն խորություն, քան «հանկարծակի հեթանոսացած պոետների արտա-

⁷ Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, էջ 493:

⁸ Նույն տեղում, էջ 94:

դրությանը մեջ»⁹ Նյուիթի իսկապես կարելի է ծավալել նաեւ Ա. Պուշկինի «Ոսկե ձկնիկ»-ի, Գ. Զուլպտմանի «Ջուլիակներ» դրամայի համահունչ ստեղծագործական առնչությունների վրա, ինչպես այս անգամ ճիշտ նկատել է ռուսահայ բանաստեղծը:

Քննենք երկրորդ պարագան. 4. Տերյանի խոսքը չի վերաբերել միայն պոլսահայ բանաստեղծներին (իմա գրողներին - Վ.Դ.): Նշենք, որ 4. Տերյանը չի սահմանազատում եւ հակադրում պոլսական եւ արեւմտյան գրականությունը, ընդհակառակը, նա ասում է՝ «պոլսական կամ արեւմտյան եւ ոչ տաճկահայ գրականություն»:¹⁰ Ու թեւ հետազոտողները «խոշոր սխալ» էին համարում արեւմտահայ եւ արեւելահայ գրականությունները շփոթելը, այնուամենայնիվ, 4. Տերյանի մոտ այստեղ նկատելի է խոսքի ընդհանրացում, որը մեզ բերում է գնահատականի որոշակիության:

Իր նշանավոր ելույթում 4. Տերյանը «*հեթանոսական*» շարժման մասին խոսում է անթաքույց դժգոհությամբ՝ որակելով այն որպէս «սուտ հեթանոսություն», «սնամեջ ազգամոլության ախտ», «զարհուրելի բառերի սեր», «անիմաստ բառերի կույտ», որը շատ շնորհալի գրողների կողմից անվանվել է «վերադարձ դեպի հայկական հին կրոնը՝ հեթանոսությունը»:¹¹

Արդյո՞ք 4. Տերյանը չէր տեսնում արեւմտահայ մշակույթի ոգու թռիչքը, թե՞ միգրացիոն բերահավատությունը մի լեզվի եւ գրականության վաղվա օրվա նկատմամբ թույլ էր տալիս տեսնել արեւմտահայ մշակույթի միայն անկատար եւ թերի կողմերը: 4. Տերյանի խոսքը վերաբերել է «*հոսանքին, ընդհանուր ուղղությանը*», նրա ոգուն եւ շնչին եւ ոչ «*առանձին գրողներին*»:

Գրողների ընդհանուր ցանկի մեջ, անշուշտ, 4. Տերյանը նկատի չէր կարող ունենալ ոչ Պ. Դուրյանին, ոչ Ս. Սեծարեանին: Տերյանաագետ 4. Պարտիզունին գտնում է, որ «... 4. Տերյանը չէր կարող բարձր կարծիքի չլինել իր պոետական խառնվածքին այնքան հարազատ Դուրյանի, Սեծարեանի եւ արեւմտահայ բանաստեղծության մյուս նշանավոր ներկայացուցիչների մասին», հետեւաբար նա ժխտական վերաբերմունք չէր կարող ունենալ «*ինչպես նախորդ գրականության, այնպես էլ, ըստ էության, արեւմտահայ պոեզիայի*»¹² նկատմամբ:

Կա նաեւ այլ հարց. 4. Տերյանի ասածները տարածվո՞ւմ են Դ. Վարուժանի, Լ. Շանթի, 4. Թեքեյանի հատկապես ողջ ստեղծագործության վրա: Անշուշտ, եթե լինեւ թերագնահատություն, այն պիտի վերաբերեր նաեւ «Զեթանոս երգեր», «Հրաշալի Յարութիւն» գրքերին, Լ. Շանթի «Հին աստուածներ» դրամային: Իհարկե, «հեթանոսութեան» տարիներին լույս տեսած Դ.

⁹ Նույն տեղում:

¹⁰ Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 92:

¹¹ Նույն տեղում, էջ 93:

¹² Վաչե Պարտիզունի, Վահան Տերյան, էջ 398:

Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուով, ավելի ուշ՝ Վ. Թեքեյանի «Հրաշալի Յարութիւն» քերթողագրքով, միայն «երկրորդական կամ եպիգոն» գրողներին հոսանքից դուրս թողնելով ամբողջական չէր լինի մի ողջ գրական շարժման բնութագրումն ու քննադատությունը: 21* որ, ինչպես նկատված է, տաղանդավոր գրողները չեն սահմանափակվում գրական մի հոսանքի շրջանակում:

Մերժելով եւ, իր կարծիքով, հակահարված հասցնելով հեթանոսականների գաղափարախոսությանը՝ Վ. Տերյանն արտահայտում է իր խստապահանջ վերաբերմունքն ու տագնապը մի առաջավոր ազգի կուլտուրական ընթացքի նկատմամբ, որը ընտրել է սայթաքումներով լի ճանապարհ: Նա չէր ընդունում մեխյանիզմի «նեոռոմանտիզմն» ու ապագայապաշտական միտումները, ինչպես նաեւ ներկան թողած՝ ապագայի գեղարվեստ՝ ստեղծելու նրանց հավակնությունները եզրակացնելով որ *«ապագան ինքը կհոգա իր մասին»*:¹³

Վ. Տերյանի հայացքներում երեւոյթի բացարձակացումը, անշուշտ, տեսանելի է, վերջիվերջո, գրականության զարթոնքը պայմանավորվում է հասարակական-քաղաքական միտումներով: Եղվարդ Ջրբաշյանը ճիշտ էր նկատում, որ Վ. Տերյանի բացասական վերաբերմունքը *«...անմիջական արժագանք էր եւ չունէր երեւոյթը բազմակողմանի գնահատման հավակնություն»*:¹⁴ Ակնհայտ էր Հրանտ Թամրազյանի խիստ գնահատությունը, գրական նոր երեւոյթի մասին Վ. Տերյանի կարծիքը նա որակում էր *«ամարդար եւ միակողմանի»*, որոնք, սակայն, *«պատմականորեն միանգամայն հասկանալի էին եւ բացատրելի»*:¹⁵

1914 թվի սկզբին Պոլսում Կոստան Ջարյանն իր ընկերների հետ (Դ. Վարուժան, Հ. Սիրունի, Գ. Բարսեղյան, Գ. Օշական եւ ուրիշներ) հիմնեց «Մեհեան» հանդեսը, թեւէ շատ արագ հակադրվեց հենց նրանց, մասնավորապես Դ. Վարուժանին «մեհեանական շարժման» մեջ կարեւորելով ապագայապաշտության ֆուտուրիզմի գծերը: Աստիճանաբար «Մեհեանը» դրսեւորում էր իր *«խորապես հակասական»* ու «ներքուստ խոցելի» կողմերը: *«Հարթեմք»*, - սա էր «Մեհեան»ի կոչերից մեկը որպես գրականության հավերժական արժեքների նկատմամբ յուրատեսակ արշավանքի նախանկիզը: Առանց դույզն սրտացավության՝ «ինքնակոչ ջահակիրները» ժխտում էին հայ եւ համաշխարհային գրականության մեծերին՝ նրանց արվեստը համարելով *«հինցած»* եւ իրենց *«հարկադրած բեռ»*, որ հետզհետե դառնում է անտանելի:

Զնայած Դ. Վարուժանը ստորագրում է «Մեհեան»ի տեսաբանական «Հանգանակը», առաջին ու երկրորդ համարներում տպագրում «Բարդիններ» եւ «Հասուն արտ» բանաստեղծությունները, սակայն շուտով, ինչպես նշեցինք,

¹³ Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 100:

¹⁴ Եղվարդ Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, էջ 494:

¹⁵ Հրանտ Թամրազյան, Վահան Տերյան, Եր., 1985, էջ 92:

գրականության զարգացման ուղիների հարցում «Մեհեան»-ի արտոնատեր խմբագիրը, այնուհանդերձ, ընդհարվում է նրա հետ՝ «բռնեցնելով» մեծամուն բանաստեղծի «կրոնադարձը»։ Դ. Վարուժանը Կ. Ջարյանի գուտ «մեհենականի» կողմից դիտվում է, ըստ էության, թշնամի։ «Անկցի Վարուժանը, որ ուրացաւ «Մեհեանը»¹⁶, - ասում էին Կ. Ջարյանը եւ նրա կողմնակիցները։ «Մեհեան»-ի հինգերորդ համարի մեջ «Հեթանոսութիւն» խորագրով հոդվածում «հեթանոսականի» եւ «մեհենականի» բանավեճի միջոցով պաշտպանելով հոսանքի ապաքաղաքական, անհատապաշտական, ծեսապաշտական սկզբունքները Կ. Ջարյանը գտնում էր, որ չպետք է նույնացնել «հեթանոսականին» եւ «մեհենականին» ամպագողգող հայտարարելով «Ոչ, բարեկամ, մենք մեհենականներս հեթանոսականներ չենք, մեր ուղին տարբեր է»¹⁷։

Եիչտ է մեզանում նկատված, որ «Հեթանոս երգեր»ը «... չէր կարող սպառել Դ. Վարուժանի նման մեծատաղանդ արվեստագետի հետաքրքրությունները»¹⁸ եւ դրանից հետո արդեն լույս տեսած «Հացին երգը» շարքում (1912-1915) «նոր ոճի եւ իդեալների որոնումը» չէր նշանակում, թե բանաստեղծը «... ժողովրդական կյանքի պարզ ու անաղարտ ծեւերի մեջ լիարժեք գեղեցկության եւ զարգացման առողջ սաղմերը»¹⁹ որոնում է ցույց տալու իր ընդմիշտ հեռացումը «հեթանոսությունից»։ Այս շարքում եւս գերակա էր միեւնույն գաղափարական միտումը կյանքի դժվարության եւ երազի հաճույքի ելակետային հակադրությունը։

Իսկ արդեն Կ. Թեքեյանի «Հրաշալի Յարութիւն» քերթածների գիրքը, որպէս ժամանակի եւ իրականության «գեղարվեստորեն գտված» թելադրություն, արեւմտահայ բանաստեղծին տարավ դեպի սիրո եւ գեղեցիկի մշակութային պատմական խորքով ընկալման քննության դաշտ՝ կարծես ապացուցելով, որ հեղինակը շարունակում է մնալ հավատարիմ իր քնարի գեղագիտական կայունացող ընկալումներին, բայց արդեն՝ ավելի փիլիսոփայական տեսողությամբ։

¹⁶ «Ըանթ», 1914, թիւ 56, էջ 117։

¹⁷ «Մեհյան», Կ. Պոլիս, 1914, N 5, էջ 67։

¹⁸ Էդվարդ Ջորջյան, Թուրանյանի պոեմները, էջ 498։

¹⁹ Նույն տեղում։